ՖՐԱՆՔՖՈՐԴ

Ֆրանքֆորդ՝ ժամանակաւ գերմանական դաշնակցութեան չորս ազատ քաղաքներէն մէկը, և մայրաքաղաք համանուն հասարակապետութեան, կը բարձրանայ Մայն գետին ափակողմեան ափանցը վրայ, որուն երկու մասերը կը միացնէ իրարու հետ, քարաշէն երկայնաձիգ 14 կամարով կամուրջ մը։

Այս քաղաքն ունի շատ մը հոյակապ շէնքեր, որոց մէջ հասարակաց պալատը՝ որ կոչուի Ռեմեր, ուր հին ատեն կ՚ընտրուէին կայսերը, և ուր կը նստէր տպա հասարակապետութեան ծերակոյտը. այս պալատանս մէջ կը պահուի ներկայապէս Կարոլոսի Դ՝ համբաւաւոր ոսկեայ հրովարտակը։ Ուրիշ մասնաւոր յիշատակութեան արժանաւոր շէնքերն են՝ Կաթողիկէն կամ Մ. Բարթողիմեայ եկեղեցին՝ ուր կը պսակուէին երբեմն կայսերը, տեսանելան կարգին ասպետաց վաղեմի պալատը, գրատունն՝ որուն չինութեան համար մեծամեծ ծախք եղան և աւարտեցաւ յամին 1825. վաճառականաց ժողովարանը, հիւանդանոցը, յիմարանոցը, հիւրանոցք և թէատրոնն որ շատ շքեղ է։ Հիւանդանոցն ունի տնկաբանութեան պարտէզ և դահլիճ անդամահատութեան։

Ֆրանքֆորդ բաց ասոնցմէ ունի շատ մը կրթանոցներ և մարդասիրութեան տուներ, ինչպէս գպրոց բժշկութեան, թանգարան բնական պատմութեան, դպրոց և վարժարան գործնական գիտութեանց, կրթարան խլից և համերց, և շատ մը կենցաղոգուտ ընկերութիւններ։ Երեսելի է դարձեալ մատենադարանը 100,000 գրքով, և գեղարուեստից դպրոցը։

Այս քաղաքը վաճառականութեան մասին շատ երևելի եղած է բոլոր Գերմանիոյ մէջ, որուն տոնավաճառքն՝ ի հնուց՝ ի վեր մեծ համբաւ ստացած են։ Ի ձեռագործ ճարտարութեան թէպէտ և մեծ յառաջադիմութիւն մ՚ունեցած չէ, բայց առանձին յիշատակութեան և գովութեան արժանի են իր ծխախոտի, գորգի, թաւիշոյ և մետաքսի գործարանքը։

Քաղաքին շրջակայքը բարեբեր ու զուարճալի են. և մեծամեծ ճամբաներ բացուած են դէպ՝ ի մօտակայ նշանաւոր քաղաքները. գեղեցիկ են դէպ՝ ի Վիզպատէն, Մայանս, Գասսել և Մանհայմ ձգուած գեղեցկաշէն երկաթուղիքը։

Այս քաղաքս թէպէտ շատ հին էր, բայց ութերորդ դարուն մէջ առաւելապէս փայլեցաւ։ Յամին 1254 ազատ քաղաք անուանեցաւ, և 1356ին ոսկեայ հրովարտակաւ սահմանեցաւ տեղի թագակալութեան կայսերաց։ 1749 ծնաւ հոս Գեթէ անմահանուն բանաստեղծը, և յամին 1806 կարգեց Նաբոլէոն զՖրանքֆորդ՝ ի մեծ դքսութիւն. բայց Վենայի 1815 ամին ժողովն եղծանելով այդ մեծ դքսութիւնը, վերադարձուց Ֆրանքֆորդի իր անկախութեան իրաւունքը, հրատարակելով միանգամայն զանիկա ազատ քաղաք, անդամ և գլուխ գերմանական դաշնակցութեան։

Բայց 1870-71 ամաց Գաղղիա-Բրուսական պատերազմը, որպէս բոլոր աշխարհի, նոյնպէս և Ֆրանքֆորդ քաղաքին բախտն ու վիճակը կերպարանափոխ ըրաւ. չեմք կրնար ըսել թէ արդեաք գոհ եղաւ իր այս ներկայ վիճակէն. միայն այսչափն ըսեմք որ մեծ ու ազատ ազգի մ՚անդամ ըլլալով չի կրսնցուց ազատ, մեծ ու յառաջադէմ քաղաք մ՚ըլլալու միջոցը. այլ մանաւանդ ընդարձակագոյն ևս ասպարէզ բացուեցաւ իր առջին յառաջադիմութեան և բարգաւաճանաց։

digitised by A.R.A.R.@